Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 139 - Ա
որոշման

«ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՆՈՐ ՇԵՆՔԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու տարածքում կառուցել վարչական նոր շենք և բարեկարգել շենքին հարակից տարածքը: Քանի որ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին ունի բազմամարդ պաշտոնեություն և ունի գրասենյակային անհարմար պայմաններ, ծրագրի գլխավոր նպատակն է բարելավել վերջինիս աշխատանքային պայմանները:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	Հայկական բարեգործական ընդհանուր միություն (ՀԲԸՄ) (գրանցված՝ ԱՄՆ, Դելավերի նահանգ, Նյու Քեսլ համայնք, 19808 ք. Վիլմինգթոն, Սենթրվիլ փ. 2711, #400 հասցեում, «29» մարտի 1955 թ., գրանցման համար՝ 486313)
4.	Ծրագրի կատարողը	Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) Հայաստանի ներկայացուցչություն (Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Մելիք-Ադամյան 2/2, ՀՎՀՀ՝ 00006479)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետություն, քաղաք Էջմիածին, բնագավառը՝ հոգևոր
6.	Ծրագրի բյուջեն	2,543,000,000 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	«Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցի» կրոնական կազմակերպություն, Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, քաղ. Էջմիածին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, (ՀՎՀՀ՝ 04703401)
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2025 թվականի մարտի 15-ից մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1) շենքի կառուցման աշխատանքներ (այդ թվում՝ հիմքերի և պատերի ամրանավորման և բետոնային ու քարային աշխատանքներ, տանիքային աշխատանքներ, շենքի ինժեներական ցանցերի մոնտաժման և ներքին հարդարման

		աշխատանքներ, տարածքի բարեկարգման և հարակից կառույցների վերակառուցման աշխատանքներ)՝ 1,450,000,000 դրամի չափով: Նախատեսվում է իրականացնել 2025 թվականի մարտի 15-ից մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում. 2) ավտոտնտեսության շենքի քանդման և վերականգնման աշխատանքներ՝ 77,000,000 դրամի չափով: Նախատեսվում է իրականացնել 2025 թվականի մարտի 15-ից մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում. 3) շենքի արտաքին դռների ու պատուհանների պատրաստման և տեղադրման աշխատանքներ՝ 186,000,000 դրամի չափով: Նախատեսվում է իրականացնել 2025 թվականի ապրիլի 1-ից մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում. 4) օդակարգավորման և օդափոխության համակարգի մատակարարման և տեղադրման աշխատանքներ՝ 175,000,000 դրամի չափով: Նախատեսվում է իրականացնել 2025 թվականի ապրիլի 1-ից մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում. 5) վերելակի ներմուծում՝ 30,000,000 դրամի չափով: Նախատեսվում է իրականացնել 2025 թվականի ապրիլի 1-ից մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում. 6) ներմուծվող նյութեր՝ 275,000,000 դրամի չափով, այդ թվում՝ ա. պղինձ՝ տանիքի համար՝ 125,000,000 դրամի չափով, բ. ամրաններ և ամրալարեր՝ 150,000,000 դրամի չափով: Նախատեսվում է իրականացնել 2025 թվականի ապրիլի 1-ից մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում. 7) շենքի կահավորում՝ 350,000,000 դրամի չափով: Նախատեսվում է իրականացնել 2026 թվականի հունիսի 1-ից մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1) շենքի կառուցման աշխատանքներ (այդ թվում՝ հիմքերի և պատերի ամրանավորման և բետոնային ու քարային աշխատանքներ, տանիքային աշխատանքներ, շենքի ինժեներական ցանցերի մոնտաժման և ներքին հարդարման աշխատանքներ, տարածքի

		բարեկարգման և հարակից կառույցների վերակառուցման աշխատանքներ)՝ 1,450,000,000 դրամ՝ առանց ԱԱՀ-ի. 2) ավտոտնտեսության շենքի քանդման և վերականգնման աշխատանքներ՝ 77,000,000 դրամ առանց ԱԱՀ-ի. 3) շենքի արտաքին դռների ու պատուհանների պատրաստման և տեղադրման աշխատանքներ՝ 186,000,000 դրամ առանց ԱԱՀ-ի. 4) օդակարգավորման և օդափոխության համակարգի մատակարարման և տեղադրման աշխատանքներ՝ 175,000,000 դրամ առանց ԱԱՀ-ի. 5) վերելակի ներմուծում՝ 30,000,000 դրամ առանց ԱԱՀ-ի. 6) ներմուծվող նյութեր՝ 275,000,000 դրամ առանց ԱԱՀ-ի, այդ թվում՝ ա. պղինձ՝ տանիքի համար՝ 125,000,000 դրամ առանց ԱԱՀ, բ. ամրաններ և ամրալարեր՝ 150,000,000 դրամի չափ առանց ԱԱՀ, 7) շենքի կահավորում՝ 350,000,000 դրամ՝ առանց ԱԱՀ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Չի նախատեսվում:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	ՀՀ կառավարության 2003 թ. հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

04.03.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ